



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ
ԿՈՉ Կ՛ՈՒՂԴԷ ՀԱՅՐԵՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ**

Շաբաթ Մարտ 1-ի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ Հսկումի արարողութիւն, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Արարողութեան աւարտին, անդրադառնալով Հայաստանի վերջին իրադարձութիւններուն, Առաջնորդ Սրբազանը խաղաղութեան, կայունութեան եւ համերաշխութեան կոչ ուղղեց, եւ հրաւիրեց մեր ժողովուրդի գաւակները աղօթելու, որ մեր հայրենի իշխանութիւնը ժողովրդավար սկզբունքներով, հաւատքով ու յոյսով առաջնորդէ հայրենի մեր ժողովուրդը խաղաղ եւ բարօր կեանքի:

Կիրակի, Մարտ 2-ի առաւօտուն, Ս. Քառասնից Մանկանց տօնին առիթով, Ս. Պատարագի ընթացքին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ «Տեր Ողորմեա»ի արարողութիւն: Առաջնորդ Սրբազան Հայրը պատարագեց եւ քարոզեց Օրէնճ Քառասնից Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: Սրբազան Հայրը անգամ մը եւս բոլոր հայրենակիցներուն կոչ ուղղեց ըլլալու զգօն եւ արթուն, չտարուելու եւ չառաջնորդուելու կիրքերով, ատելութեամբ եւ իրարամերժ ոգիով, այլ գործելու փոխադարձ հասկացողութեամբ, համերաշխութեան ոգիով եւ քրիստոնէական սիրով:

Այսու կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի որոշումով, յառաջիկայ Կիրակի, 9 Մարտին, բոլոր Թեմերու մեր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան աղօթք պիտի կատարուի յիշեալ դէպքերուն զոհ գացած անմեղներու յիշատակին:

ԴԻՒԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ